



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1897

ԹԻԻ 10



ԿՈՑՐԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ
ՅԻՍՈՒՍԻ ԶԵՌԲՈՎ

Սեբաստիանոսը մէջ Յիսուսի հրաշքով կոյրերուն աչքերուն տեսութիւն չնորհերուն մասնաւոր պատմութիւնները կը կարդանք: Այս կարգի հրաշքերուն մէջ նշանաւոր են Յովհ. Թ. գլխուն մէջ պատմուածը և Բարսիմէոսի բժշկութիւնը (Մար. Ժ. 46—52):

Հարկաւ, այս պատկերը չհասկցնէր մեզի թէ ճիշդ ի՞նչ պատահեցաւ մասնաւոր առթիւ մը, ոչ ալ կը ներկայացնէ ուէ տեսարան ճիշդ պատահածին պէս, վասն զի դէպքերուն պատկերները անոնց պատահած ժամանակը չգծուեցան: Բայց արուեստագէտին երեւակայութիւնը, Սեբաստիանոսը պատմութիւններէն հրահանդուելով և առաջնորդուելով, հոս ներկայացուցած է ինչ որ անտարակոյս ճշմարիտ է կենդանութեան և իրողութեան նայելով: Գիտենք որ Յիսուս, երբ աշխարհի վրայ կը գրանուէր, կը բժշկէր, ընդհանրապէս բացօդին մէջ, մեծ բազմութեամբ կոյրեր, խուլներ, կաղեր և ամէն տեսակ հիւանդութիւն ունեցողներ:

Յիսուս աշխարհ եկաւ մարդոց հոգիները փրկելու, բայց մարդոց վրայ ունեցած սէրը այնքան մեծ էր, և ինք այնքան մեծ կարեկցութիւն ունէր անոնց վրայ, որ բարիք կ'ընէր ամէն կերպ օգնութեամբ և օրհնութեամբ անոնց՝ որ իրեն կը դիմէին, և

անոնց՝ որոնց մէջ կը բնակէր երկրիս վրայ:

ՏԱՍՆՈՅԻ ՄԸ ԱՐԺԵՔԸ

Մարդիկ երբ կ'ուզեն խնայութիւն ընել, շատ անգամ դիւրին կը գըտան խնայութիւնը որոմութիւն տալու ստակէն սկսիլ, մանաւանդ մարդոցմէ չերևցող ողորմութիւններու ստակէն:

Շիտակ չէ պակասութիւն գտնել հաւատարիմ աշխատաւորի մը վրայ, և քարոզէ մը օգուտ քաղելու ամենէն գէշ կերպն է զանիկա խրժրժել: Շատեր կ'ընեն այսպէս, և կը գտնուին անխորհուրդ ծնողքներ որ կ'ընեն իրենց զաւակաց առջև, և ուստի գէշ օրինակ կ'ըլլան անոնց. քարոզչին յարգանք ընծայելէ կ'արգելեն զանոնք:


Ուղղամիտ տղեկ մը մօտերս կիրակի օր մը խընդաց իր մօրը վրայ շատ իրաւամբ: Իր մօրը հետ եկեղեցի գացած էր, և իր սուր աչքերով տեսած էր թէ ստակը զոր մայրը դանձանակը ձգեց, ո՛չ արծաթ էր ո՛չ ոսկի: Ճամբուն վերայ, մինչ տուն կ'երթային, չափահաս անձինք սկսան խօսիլ քարոզին վերայ: Ըսին թէ «Շատ ձանձրալի բան էր» և տղեկին մայրն ըսաւ թէ «Այն ի՞նչ խեղդուկ ձայն էր ան, և ինչո՞ւ այնպէս բռունցով կը զարնէր Սուրբ Գիրքին» ևն: Փոքրիկ Դաւիթ որ իր մօր քովէն կը քալէր, մտիկ կ'ընէր իր ծնողքին ամէն մէկ ըսածը, և վերջը ինքն ալ ըսաւ իր կարծիքը. «Մայրիկ, տասնոցով մը ատկէ աւելի բան չես կըրնար սպասել»:

ԸՆՅԻ, ԵՒ ՁԸՆՅԻ

Պատանի մը Պոսթընի նաւամատոյցներէն մէկը գարով ըսաւ հանրածանօթ վաճառականի մը, «Տէր, ձեր նաւուն մէջ աշխատողի մը պէտք ունիք: Ստակ չահիլ կ'ուզեմ»:

«Ի՞նչ կրնաս ընել» հարցուց վաճառականը: «Կրնամ շանալ կատարելու ինչ որ ինձի հրամայուի» պատասխանեց տղան: «Ի՞նչ գործ ըրած ես» «Երկու տարիի չափ սղոցով

կտրած և ճեղքած եմ մօրս բոլոր փայտերը» «Ի՞նչ ըրած չես» հարցուց մարդը, որ զուարճալի հարցումներ ընող մըն էր: «Ես, պատասխանեց տղան, վայրկեան մը կենալէ ետև, «ամբողջ տարի մը փափսացած չեմ գարոցին մէջ» «Շատ լաւ, աւտիկա աղէկ բան է» ըսաւ մարդը, «դուն կրնաս աշխատիլ այս նաւուն մէջ, և կը յուսամ թէ օր մըն ալ անոր տէրը պիտի ըլլաս: Տղայ մը որ կրնայ փայտի դէպ մը կառավարել և իր լեզուն սանձել, լաւ նիւթէ շինուած ըլլալու է»:



ՕՐՍՅՈՐՏԻ Ս. ՄԱՐԻԱՄՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԳՍԻԻԹԸ

Անգղիոյ Օքսֆորտ քաղաքին ամենէն համբաւաւոր եկեղեցիներէն մէկն է Սր. Մարիամու եկեղեցի կոչուածը: Հոս դրուած պատկերը անոր բաղեղով ծածկուած գաւիթը կը ներկայացնէ: Այս եկեղեցին մասնաւոր միաբով մը կը համարուի Համալսարանին եկեղեցին: Եւ սակայն կապակցութիւն մը չունի քսանէ աւելի գոյէճներուն հետ որոնցմէ կը բաղկանայ Օքսֆորտի Համալսարանը, բայց քաղաքին կեդրոնը կը գտնուի և բոլոր գոյէճներուն մօտ:

Օքսֆորտ քաղաքը 50,000 բնակիչ ունի:

ՍԻՄՈՆ

Ատենով շատ սրամիտ և աչքը բաց տղայ մը կար զոր պիտի անուանենք Փոքրիկ Սիմոն: Այն արթուն տղոց մէկն էր, որ իրենց քիթը գրեթէ ամէն բանի մէջ կը խոթեն, և կը կարծեն թէ բոլոր աշխարհի գիտցածէն կէս մը աւելի գիտեն: Շատ պզտիկ էր երբ դպրոց դնաց: Մայրը կ'ուզէր որ տղան ունէ ուրիշ բաներ սորվէին առաջ աղէկ կարգալ գրել սորվի: Բայց ինք աւելի ընտրեց սորվիլ աշխարհագրութիւն, քերականութիւն, նաև թուարանութիւն: Ուրովհետև շատ սրամիտ էր, շուտով սորվեցաւ շատ գէշ հեգուած բառեր, և կրնար ըսել բոլորովին անճիշդ լեզուով թէ ի՞նչ է բայը կամ մակարայր: Հաւանօրէն կարող էր ըսել թէ Միչիկըն Գընէթիթիթի սահմանակից է, մինչ իր հասակակից միւս տղաքը այդ տեղերուն աւանաներն անգամ երբեք լսած չէին: Փոքրիկ Սիմոն որչափ որ պզտիկ էր, այնպիսի կէտի մը հասաւ վերջապէս որ պէտք էր երկու ճամբաներէն մէկն ընտրել: Ինք կէս մը սորված էր շատ մը բաներու վրայով, եթէ ոչ կըրնար սորվիլ ամէն բան քանի մը բաներու վրայով: Ուրուեց որ առաջինն ընտրէ և այդ ճամբան բռնեց և վերջապէս մեծցաւ և եղաւ խոշոր Սիմոն մը:

Երբ կ'ուզէր կարգալ, երբեք ձեռք չէր առնէր աղուոր պատմութիւն մը և կարգար անոր ամէն մէկ բառը, հապա անոր դիւրին մասերուն վրայէն կը սահէր կ'անց

ներ, և այսպէս տասը տասներկու պատմութիւններու նիւթերն իրար կը խառնուէին իր մտքին մէջ: Գործիքներու արկը մը բացածին պէս, ձեռք կը զարնէր կառք մը շինելու: Լմեննալուն քիչ մնացած՝ կը սկսէր աղուոր սեղան մը, և կը շինէր նշանաւոր կերպով գեղեցիկ որրան աթոռ մը, որ սակայն մէկ կողմին վրայ կը կենար փոխանակ օրուելու: Բայց նոյն ատեն կ'ըսէր թէ յիմարութիւն է ժամանակ վատնել և նեղուիլ մէկ բան մը և կատարեալ բան մը չի ներու համար:

Երբ աւելի մեծցաւ, մարդիկ կը հաւնէին անոր, վասն զի կարող էր խօսիլ արևուն տակը գտնուող բոլոր

բաներուն վրայ, և իրաւ որ շատ ալ հաճոյական կը գտնէին անոր խօսքերը, եթէ չէին փնտուեր դոհացուցիչ և կատարեալ տեղեկութիւն: Նախորդ տարուան օրացոյցին չափ ալ արժէք չունէր ինք այն անձանց աչքին որ իրողութիւններ կը փնտուէին:

Կը խորհէր որ երբ մեծնայ, փաստաբան ըլլայ, բայց բժշկութիւն ուսանելով սկսաւ: Քիչ ատեն ետքը բնագիտութեան վրայ փաստաբանի գիտնալիքէն աւելի բան գիտէր, բայց բժշկի մը գիտնալիք բաներուն կէսը չէր գիտեր: Ժամանակ մը ետքը սկսաւ զարմանալ թէ ինք ի՞նչ ունէր որ չէր յաջողեր իր ձեռնարկած և ո՛չ մէկ բանին մէջ: Քանի դնաց աղքատացաւ, մինչ ուրիշ մարդիկ, որոնք աւտնով տղաքներ էին իրեն հետ, տղաքներ՝ որոնք գերիներու պէս աշխատած էին քանի մը բաներու վրայ, չափահասութեան տարիքին հասնելով

ըր չեն կրնար լողալ մինչև որ ամուռնան մը կամ վրց շաբաթուան չըլլան, և կը խեղդուին եթէ ջուրին մէջ դուրին: Ուստի բնագիտով մը կամաց կամաց կը վարժուին ջուրը մտնել, և կ'ըլլան աւելի ջուրի քան ցամաքի կենդանիներ: Կը մեկնին կղզիներէն ուր իրենց կեանքն սկսած էր անցեալ աշունին, և կ'երթան դէպ հարաւ, հեռուն՝ Խաղաղական Ովկիանոսը: Կը փնտուեն ցած ջուրեր, և հանգիստ և խաղաղ կը քնանան ջուրին երեսը: Փոկ բռնելու և սպաննելու կերպը սա է. Մարդիկ կը մտնեն անոնց և ջուրին մէջտեղը և զանոնք կը քշեն և կը տանին սպանդանոցները (սպիտակ), վերջին տարիներուս մէջ փոկերը անփոյթ կերպով կը սպաննուէին, ինչպէս ցամաքին վրայ՝ նոյնպէս ալ խոր ծովուն մէջ, այնպէս որ մուշտակաւոր փոկերը անհետ ըլլալու վտանգին մէջ են:

կ'անցնին լուսոյ շառաւիղները, այլ կրնաք անոնց մէջէն որոշ տեսնել առարկաները:

Կը գտնուին մարդիկ որոնց միտքերը անթափանցիկ են: Կը նմանին տղմուտ ջուրի: Լոյսը չկրնար անոնց մէջ մտնել և ոչ անոնց մէջէն անցնիլ: Չունին յստակ խորհուրդներ կամ գաղափարներ:

Հարցուցէք մանչերու և աղջիկներու այն դասերուն վրայով զորոնք սորված կը համարին, և չեն կրնար յըստակ պատասխան մը տալ: Այս կը ցուցնէ թէ անոնք յստակ խորհուրդներ չունին: Մտքերնուն մէջի գիտութեան գետը տղմուտ և պղտոր է:

Չեր մէջէն քանի՞ հոգի յստակ գաղափարներ ունին կիրականօրեայ Դպրոցի դասերուն վրայ, և կարող են յստակ պատասխաններ տալ ձեր ուսուցիչներուն ըրած հարցումներուն: Չեր սորվելու ամէն մէկ բանին վրայ պէտք է որ յստակ գաղափարներ, յստակ խորհուրդներ ունենաք, և զանոնք յստակ լեզուով բացատրէք: Ամէն ալ պէտք է որ ամենապայծառ ակնվանիին պէս յըստակ ըլլան:

Կը գտնուին մարդիկ որոնց միտքերը նման են այն գէշ ապակիներուն որոնք պատուհանի կը գործածուին: Իրենց մէջէն անցնող բաները ծուռուծուռ կը ցուցնեն: Անոնց պատմութիւն մը ըսէ, և երբ իրենք ալ նոյն պատմութիւնը ուրիշի մը ըսեն, ծուռ պարագաներ կը մտնեն մէջը: Պատմութիւն մը թող երեք այսպիսի միտքերէ անցնի, և պիտի չճանչնաք թէ ձեր պատմածն է:

Տղմուտ միտքերը գէշ են, բայց տղմուտ հոգիներն աւելի գէշ են: Հանցած եմ քանի մը մանչեր ու աղջիկներ որոնք այսպիսի հոգիներ ունին: Չէք կրնար բան մը տեսնել անոնց մէջէն: Լոյսը ոչ ներս կ'ընդունին, ոչ դուրս կ'արձակեն: Այսպիսի հոգիներու մէջ տիղմը կը շարժուի իր յատակէն, եւ ճիշդ ինչպէս ճախնային օձերը, կունչող դորտերը, և թունաւոր միջատները տղմուտ և անշարժ ջուրին մէջ, այսպէս ալ խաբէութիւններ, նենգութիւններ, ստուերութիւններ, անմաքուր խորհուրդներ և չար փափաքներ բոյն դրած են այսպիսի հոգիներու մէջ:

Կը ճանչնամ ուրիշ մանչեր և աղջիկներ, որոնց հոգիները ակնվանիի պէս պայծառ են: Կրնաք նայիլ անոնց պայծառ աչքին մէջ, և տես



եղած էին մեծ մարդիկ, հարուստ մարդիկ, համբաւաւոր բժիշկներ, փաստաբաններ և Աւետարանի պաշտօնեաներ. իսկ ինք, պղտիկ Սիմոնը, մեծնալով եղած էր խոշոր Սիմոն մը: Ուստի ամէնքը սկսան ծաղրել զանիկա և հեգնել: Երբ քսան տարեկան եղաւ, ինքզինք հանճար մը կը կարծէր, երբ քառասուն տարեկան եղաւ, դարբինի մը խանութին քովերը կը դեզերէր (սընքտալ) և կ'ըսէր ինքնիւրեն, «Երանի թէ պայտարութիւն (սպանդան) սորված ըլլայի»:

ՓՈԿԻ ՈՐՍՈՐԻՈՒԹԻՒՆ

Մուշտակաւոր փոկը որ առաջ մեծ բազմութիւններով կը գտնուէր ծովուն մէջ և Հիւսիսային Ամերիկայի հիւսիսային արևմտեան կղզիներուն և ծովեզրներուն վրայ, մեծ գին կ'արժէ իր նուրբ և գեղեցիկ մուշտակին համար:

Մեր պատկերը գաղափար մը կուտայ թէ ընդհանրապէս ի՞նչ կերպով կը բռնուի փոկը: Փոկը թէ՛ ցամաքի թէ՛ ջուրի կենդանի է: Փոկին ձագե

Հիմա անգլիա և Միացեալ Նահանգները ջանքեր կ'ընեն փոկի երամակները պահպանելու և մշտնջենաւորելու:

ԱԿՆՎԱՆԻԻ ՊԵՏ ՊԱՅՄԱՌ

«Պուն քեզ մարդու պահէ» Ա ՏԻՄ. Ե. 22.

Մեր միտքերը և հոգիները պէտք է որ ակնվանիի պէս պայծառ ըլլան: Բայց կան ակնվանիներ որ անթափանցիկ են, այսինքն՝ անոնց մէջէն լոյս չտեսնուիր: Եթէ արեւին բռնէք զանոնք, անոր շառաւիղները չեն անցըներ: Ուրիշ ակնվանիներ լուսաթափանց են: Քիչ մը լոյս կ'անցընեն իրենց մէջէն, բայց չէք կրնար որոշ պատկեր մը տեսնել: Երբեմն լեցուն կ'ըլլան, հանքածուխի կամ երկաթի կամ կաւի և կամ ուրիշ նիւթերու անմաքուրութիւններով որոնցով կ'արուի անոնց պայծառութիւնը:

Կը գտնուին ուրիշ ակնվանիներ որ թափանցիկ են, այսինքն՝ ապակիի պէս յստակ են: Իրենց մէջէն ոչ միայն

նեւ անոնց յատակ, պայծառ, ճշմարտախօս և համեստ հոգիներուն մինչև յատակը: Անոնց հոգիներուն մէջ չկայ ո՛չ տիղմ, ո՛չ անմաքրութիւն, ո՛չ սուտ, ո՛չ խաբէութիւն, և ոչ երբեք աղօս բան մը, ոչ մէկ ծռութիւն, հապա ամէն բան արևուն լայսին պէս թափանցիկ է և յատակ: Ատոնք այն մանչերն ու աղջիկներն են զորոնք կը սիրենք և ամէն մարդ կը սիրէ: Համեստ են անոնք և ճշմարտախօս, և կ'ուզեն որ ամէն մարդ կարգայ իրենց սիրտերը:

Բայց դիցուք թէ քու հոգիդ արդէն անմաքուր և տղմուտ է, ի՛նչպէս կրնայ սրբուիլ և մաքրուիլ: Սաղմոսերգուն այդ հարցումն ըրած և անոր պատասխանած է ասկէ երեք հազար տարի առաջ. «Երիտասարդը ինչո՞վ մաքրէ իր ճամբան. քու խօսքիդ համեստ անոր զգուշութիւն ընելով»: Հոգիդ Յիսուսի ձեռքերուն մէջ դիր, և թող մաքրէ զայն: Խնդրէ անկէ որ լուայ քու հոգիդ, և ձիւնէն աւելի ճերմակ և ամենէն պայծառ ակնվանիէն աւելի պայծառ և յատակ պիտի ըլլայ:

ՊԶՏԻԿ ՆԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պզտիկները պզտիկ նեղութիւններ կ'ունենան. բայց պզտիկ բեռ մը ճիշդ այնչափ ծանր է պզտիկ տղու մը համար, որչափ մեծ բեռ մը՝ ուժեղ մարդու մը համար, և պզտիկ նեղութիւն մը ճիշդ այնչափ ծանր է պզտիկ տղու մը համար, որչափ մեծ վիշտ մը՝ անոնց համար որ աւելի մեծ և աւելի ուժեղ են:

Երբեմն չափահաս անձինք կ'արհամարհեն պզտիկ նեղութիւնները զորոնք կը զգան տղաք: Գիտեն թէ ի՛նչպէս պզտիկ են անոնք և թէ ի՛նչպէս չուտով պիտի անցնին. բայց նոյն առտին իրենք ծանրաբեռնեալ են իրենց անձնական նեղութիւններովը: Իսկ այդ իրենց նեղութիւններն ալ Աստուծո՛յ աչքին պզտիկ են և կրնան նաև չուտով անցնիլ և մոռցուիլ:

Պէտք է որ արհամարհենք ոչ մէկ ու՛ն նեղութիւնները: Անոնք կրնան պզտիկ երևնալ մեզի, և սակայն զանոնք կրողներուն շատ ծանր գալ: Պզտիկ նեղութեան մը ժամանակ կարեկցութեան խօսք մը շատ անգամ կը թեթևցնէ ծանր բեռ մը, և մեզի նոր քաջութիւն կու տայ զայն կրելու:

Տէրը մեզ կը զօրացնէ և քաջասիրտ կ'ընէ. բայց երբեմն մեր սիրտերը կը նուաղին և մեր հոգիները կը

տխրին: Ահա այն ատեն զուարթ խօսք մը, քաղցր և սիրալիր բարև մը կըրնայ շատ մը աւելի արժէք ունենալ մեզի համար քան ոսկիի գանձը: Կան մարդիկ և կիներ, որ երբեք պիտի չմոռնան մարդասիրական ձեռքը որ սրբածէ իրենց մանկութեան արցունքները, կամ քաղցր ձայնը որ իրենց մխիթարական խօսքեր խօսած է վճատութեան և տխրութեան ժամերու մէջ: Եւ մենք կրնանք ունենալ այսպիսի բաներ ընելու արտօնութիւնը գրեթէ ամէն օր: Չմոռնանք վիշտ մը թեթևցնել, արցունք մը սրբել, մաշած սիրտ մը զօրացնել, և այսպէս մեծարել երկնաւոր վարդապետը, մխիթարել անոր պզտիկները, և մեր անձերուն համար ստանանք բարեկամութիւններ և սէրեր որ չեն ծերանար կամ մեռնիր:

ՍՈՒՂ ԲԱՆ ՄԸ

Ազնուական մը երբ Լոնտոնի զբօսավայրերէն մէկուն մէջ կը պտրտէր, հանդիպեցաւ մարդու մը որուն բնակարանը աղքատաց յատուկ տան մէջ կը գտնուէր: Մարդը դուրս ելած էր քիչ մը օդ առնելու համար, և ազնուականին հետաքրքիր ուշադրութիւնը հրաւիրած էր իր վրայ:

«Է, բարեկամ», ըսաւ ազնուականը խօսքի մանելով, «ցաւալի է որ քեզի պէս մէկը այդպիսի տեղ մը բնակի: Կրնամ հարցնել թէ քանի տարեկան ես»: «Ութսուն», պատասխանեց մարդը: «Աղքատանալէդ առաջ արհեստ մը ունէ՞իր»: «Այո, ատաղձագործ էի»: «Ոգեղից ըմպելի կը գործածէ՞ր»: «Ոչ, ո՛հ, ոչ, միայն գարեջուր, երբեք անկէ զօրաւոր ըմպելի չէի գործածեր. ոչ ուրիշ բան, բայց միայն գարեջուր»: «Օրը ո՞րչափ գարեջուր կը խմէիր»: «Կարծեմ՝ օլը վեց փէնիի (երեք դահեկան)»: Ո՞րչափ ժամանակ»: «Կարծեմ՝ վախճուն տարի»:

Ազնուականը իր յուշատետրը հանած՝ մատիտովը թուանշաններ կը գրէր մինչ կը խօսակցէր մարդուն հետ:

«Հիմա, ըսեմ քեզի», ըսաւ ազնուականը երբ լնցուց հաշուելը, «թէ այդ գարեջուրը քեզի քանի՞ նստած է, մարդուկս: Գուն քու աչքովդ նայէ սա թուանշաններուն և հասկցիր»: Ազնուականը ցուցուց թէ գարեջուրի համար օրը վեց փէնիի ծախսելով վաճառուած ստակին գումարը, եթէ շահու գրուած ըլլար, տարին 160

Անդդ. ոսկի կը բերէր, կամ շաբաթը 3 Անդդ. ոսկի, և ատով անոր ապրուստը կ'եղլէր:

«Տես, կալուն մը օղին քանի՞ եղաւ», ըսաւ դատաւոր մը դատաւարութեանէ մը ետև: «Մէկ կալուն օղին երկու մարդասպանութիւն գործեց. երկու կիներ որբւարի և ութ դաւաճներ որբ ըրաւ»:


ՊՍՏԱՍԻԱՆ ՅՈՒՒՍԻ ՀԱՆՆԵՒՈՒԿԻՆ

«Իր տանը նեղութիւն տուող հով պիտի ծառայէ. ու յիմարը իմաստուն սիրտ ունեցողին ծառայ պիտի ըլլայ»: Առակ. ԺԱ. 29:

Լուծեցին, Կ. Պոլս. — Գրեգոր Ս. Գարեկէլեան, Եղիս Կ. Գրեգորէան: Ա. պոլս. — Յ. Հրանտ 8. Ֆելեան, Մ. Կրօն Մ. Չաքրբեան: Գրեգորաբ. — Բ. Աբրահամեան: Ատարազար. — Նոյեմբ Թ. Մինասեան:

(Որովհետև փոքրկները անփոյթ կ'երևին լուծել մեր հանելուկները, որ յատկապէս իրենց համար դատարատուած են, զանոնք լուծող չափահասներու անուններն ալ կը գնենք):

ՀԱՆՆԵՒՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ



- 1. Սաւուղի հարձերէն մին.
- 2. Ասորի ցեղին մէկ քաղաքը.
- 3. Եգիպտի քաղաքներէն մին.
- 4. Արեւելեան թուրքացի մէկ գաւառը:

Այս շքուանները, որոնք հինգ հինգ գիրերէ կը բաղկանան, գրեցէք վերոգծեալ բոլորական և պատկերին մէջ, մէյմէկ գիր դնելով կէտերուն տեղը տրամագծի ուղղութեամբ, այսինքն ամէն ալ կեդրոնէն անցնելով: Առաջին անուանը սկսեցէք գազաթի կէտէն, երկրորդը՝ ձախակողման յաջորդ կէտէն, երրորդը՝ ասոր յաջորդ կէտէն, չորրորդը՝ ասոր յաջորդ կէտէն: Այն առտին շրջադիմը ձևացող գիրերով պիտի կարգաք Պօղոս առաքեալին աշխատակիցներէն մէկուն անունը:

Իսկ հաշուատեղ ընթերցողաց կը յանձնարարուի այնպէս մը գնել 1—17 թուանշանները նոյն կէտերուն վրայ, որ իւրաքանչիւր տրամագծի գումարը 45 ըլլայ:

Կ. պոլիս

Ամերիկայի Մեխիկոնապոսի Արտօնատէր ձեռնարկը Տնօրէն—Խմբագրիչ Ֆինանսները Երգուշ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԿՈՒԹՅՈՒՆ
Ի ՏԵՐԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ԳՅՈՒԱՅԱՆ